ԾՆՈՒՆԴ ՌՈՒՍԱԿԱՆ ԳԱՀԻ ԹԱԳԱԺԱՌՆԳԻ

—

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

«Տեառն ողորմութեամբ, Մենք, ՆԻԿՈՂԱՅՈՍ երկրորդ, Կայսր և Ինքնակալ Համայն Ռուսիոյ, Արքայ Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլեանդիոյ և այլն, և այլն, և այլն, յայտարարում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին, սոյն յուլիսի 30-ին Մեր ամենասիրելի Ամուսին Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնան յաջողութեամբ ազատուեց և ծնաւ Մեզ Որդի, որ անուանուեցաւ ԱԼԷՔՍԻՍ։ Այս ուրախալի իրողութիւնը համարելով Տիրոջ բարեհաճութեան նշան առ Մեզ, և Մեր Կայսրութեան, Մեր հաւատարիմ հպատակների հետ վերառաքում ենք ջերմագին աղօթքներ առ Բարձրեալն Մեր անդրանիկ Որդու բարեյաջող մեծանալու և աճման համար, որ կոչւում է լինել ժառանգ Աստծուց Մեզ յանձնուած պետութեան և Մեր մեծ պաշտաման։ 1899 թուի յունիսի 28 ի հրովարտակով Մենք հրաւիրեցինք Մեր ամենասիրելի եղբայր Մեծ Իշխան Միխայէլ Ալէքսանդրովիչին ժառանգ լինել Մեզ մինչև Որդի ծնելը Մեզ։ Այսուհետև, ըստ զօրութեան Կայսրութեան հիմնական օրինաց, Մեր Ալէքսիյ Որդուն է պատկանում թագաժառանգի բարձր կոչումն ու տիտղոսը՝ նրա հետ

կապուած բոլոր իրաւունքներով։ Տրուած է Պետերհոֆում, յուլիսի 30-րդ օրը, Փրկչի Ծննդեան հազար իններեր-կրորդ չորրորդ, իսկ Մեր Թագաւորութեան տասներորդ-տարին»։ Իսկականի վերայ Նորին Կայսերական Մեծութեան Սեպհական ձեռքով ստորագրած է

«ՆԻԿՈԼԱՅ»։